# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սիսիանի Հաց ՍՊԸ-ն ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | գյուղմթերք | գյուղմթերք | գյուղմթերք | գյուղմթերք | Կաղամբ 45% - վաղահաս, 55% - միջահաս: Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առանց հիվանդությունների, լիովին ձևավորված, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով, ձևով, համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վաղահաս կաղամբը` տարբեր աստիճանի փխրունությամբ։ Գլուխների մաքրման աստիճանը` կաղամբի գլուխները մաքրված լինեն մինչև մակրեւույթը, ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևներով, կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից։ Կաղամբի մաքրված գլուխների քաշը 2-5 կգ: Մատակարարված սննդատեսակի առնվազն 90 տոկոսում պետք է գերակշռեն վերը նշված հատկանիշները: Անվտանգությունը և փաթեթավորումը` ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի։ Մատակարարումն իրականացվում է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | առնվազն շաբաթական մեկ անգամ երկուշաբթի օրերին՝ ոչ շուտ քան 8:30-ից մինչև ոչ ուշ քան 16:30: Մթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 1 օր: Մատակարարումն իրականացվում է տեխնիկական բնութագրում նշված օրը՝ նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսակապով: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով, *ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Տեղեկացվում է, որ տվյալ սննդամթերքի կասկածելի որակի կամ տեսքի դեպքում այն կներկայացվի փորձաքննության՝ ապրանքի որակի համապատասխանությունը բնութագրում ներկայացված պահանջները հաստատելու նպատակով: Տեղեկացվում է նաև, որ սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված |

լիազորագրով:Համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 05-ի «Աբովյան համայնքի ենթակայության մանկապարտեզների կողմից սննդամթերքի ձեռքբերման գործընթացը ուսումնասիրելու նպատակով մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 172 կարգադրության համաձայն հանձնաժողովը պարբերաբար հետևելու է մատակարարների հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարմանը: Հանձնաժողովը անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը:

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Սիսիանի Հաց ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |